

ՀՈԳԵԼՈՐ ԻՆՍԱՆՈՒԹԻԱՆ ՎԻՃԱԿԸ

Հոգեւոր իշխանութիւնը, որ և ուրիշ բառիւ կառավարութիւն կամ տեսչութիւն եկեղեցւոյ կ'ըսուի, յատուկ իրաւասութիւն մի է անկախ և բացարձակ՝ հիմնեալ ի վերայ օրինաց և կանոնաց եկեղեցւոյ: Ոյն իշխանութեան քրիստոնէութեան հին դարերուն մէջ ինչ մեծ ազդեցութիւն եւ զօրութիւն ունենալը եւ ներկայ ժամանակիս մէջ ինչ զգալի նուազութեան և տկարութեան մէջ գտնուիլը իմանալու համար՝ բաւական է մարդ անգամ մը ակնարկ տայ պատմութեան: Հոն պիտի տեսնէ այնպիսի դէպքեր, որոնք յայտնի կը ցուցնեն Հոգեւոր իշխանութեան ինչուան աշխարհի թագաւորաց վերայ ունեցած մեծ ազդեցութիւնը. Թէոդոս Հօր կայսր մը խոնարհած կը տեսնէ եկեղեցւոյ պաշտօնէի մը դիմաց, որոյ զէնքը ուրիշ բան չէ, եթէ ոչ Մատուցոյ բանը: Պատմութիւնը կը ցուցնէ մեզ նաեւ թէ նախնի Պատրիարքունք մինչեւ անգամ արքունի գործոց միջամտութիւնէն ինչին. վասն որոյ անգամ մի ծերունին Միգրոնիկոս Բալէոլոգ Զունաց կայսրը պատգամ խրկեց Պատրիարքին որ միայն եկեղեցւոյ գործքերուն խառնուի, և պետութեւն գործքերը կայսեր ձեռքը և անոր կամացը թողու: Որուն այսպէս պատասխան խրկեց Պատրիարքը. « Եւ ինչիւր ճիշդ նման է, որպէս թէ մարմինը ըսելու ըլլայ հոգւոյն, թէ մեր մէջը հասարակաց բան մի չկայ, քու օգնութեանդ պէտք չունիմ իմ առանձին գործքերուս մէջ » . (Կանդակուզէնոս): Պատասխանը որչափ որ աներկիւղ՝ այնչափ ալ աչքի զարնող է: Եւ այս գեղեցիկ բաղդատութիւնս


որչափ ճիշտ ու նմանագոյն ըլլալը բացատրութեան կարօտ չէ, և ոչ թերութիւն անձկութիւնը կը ներէ մեզ երկարօրէն խօսիլ սոյն նիւթիս վերայ: Թէպէտ ժամանակիս պարագայից նըկատմամբ խիստ կարեւորութիւն ունի: Կը մնայ մեզ միմիայն անցեալ դարերու եկեղեցւոյ իշխանութեան վիճակը աչքերնուս դիմացը ունենալով՝ ներկայ Հոգեւոր իշխանութեւն վերայ խորհրդածել, մանաւանդ թէ ցաւիլ և վշտանալ տեսնելով անոր իւրաւասութեան այն աստիճանի տկարութեան հասնիլը, ինչուան չէ՞ թէ թագաւոր մը, արքունի անձ մը եւ իշխանաւոր մը, այլ լոկ պարզ անհատ մը հոգեւոր իշխանութեան դէմ լեզուադարբերով՝ հրամաններ կ'արձակէ, վճիռներ կու տայ: Եւ այնպիսի իշխանութեան և կառավարութեան դէմ, ուսկէ տիեզերասաստ և աշխարհակալ թագաւորները կը պատկառէին և կ'ահաբեկէին, այսօր կը տեսնենք որ մարդոց մէջ ամենէն նըւաստը կը յանդգնի անոր դէմ որոտալ, և սպառնալիք ընել, և առանց իրողութեւն մը ստուգութիւնը գիտնալով՝ հակառակ ոգւով կը ընել, եւ ջանալ թէ որ կարելի է նէ, աշխարհիս առջեւը առակ նշաւակի ընել, և ստիպել զինքը յանիրաւի զրպարտեալ եկեղեցականքը պատժելու, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ հոգեւոր իշխանութիւնը յետին աշխարհականի մը ձեռքը մատնել և անոր խաղալիք ընել, որպէս թէ եկեղեցական իշխանութիւնը չկրնայ և չուզէր պատժել յանցաւոր մը:

Եւ այս անպատեհութիւնները չեմ սխալիր հետեւանք համարել ազգային աշխարհիկ վարչութեան մը նըւազանալուն, որ հակառակ հին դարերու եկեղեցւոյ բացարձակ իշխա-

նութեան՝ երբոր մէկդիէն կը ջանայ հոգեւորը մարմնաւորին տակ նուաձել, միւս դիէն ալ տեղիք կու տայ ասանկ անպատշաճ վարմունքներու, որուն արդիւնքը ուրիշ բան չէ, եթէ ոչ իսպառսպուռ ջնջումն եկեղեցւոյ իշխանութեան, որ է հիմն և հաստատութիւն կրօնի:

Առաքելական սուրբ Աթոռոյս հոգեւոր իրաւասութիւնն ալ կրած է շատ հեղ, և տակաւին կը կրէ այս կերպ յարձակումներ ու ինչուան անգամ սպառնալիքներ ըստ պահանջման ազատութեան դարիս. սակայն Աթոռս եկեղեցւոյ պատիւը պահելու և հոգեւոր իշխանութիւնը հաւատարակ մարդոց առ ոտն կոխել չտալու համար վեհանձնաբար լռելու կը պարտաւորի, և կը ներէ բոլոր անոնց որոնք խոժոռ դիմօք իրեն կը նային. թող տալով Ազգային Վարչութեան կամացը, թէ որ պատշաճ կը դատի, զանոնք յուղղութիւն և ի պարկեշտութիւն հրաւիրել, համ եւ հոտ գնել անոնց լեզուին, որ խօսին ինչ որ պատշաճ է իրենց բանականութեան, և գրեն ինչ որ օգտակար, և ոչ թէ անստուգութիւնը ստուգութեան պատրուակ ընելով՝ գայթակղեցնել զՎերմեռանդ հասարակութիւնը, որոյ համար կը յիշեցնեմք իրենց Վրիստոսի Տեառն մերոյ խօսքը. Սաբ. ԺԸ. 6:

Այս է աւասիկ Հայոց հոգեւոր իշխանութեան արդի վիճակը:



Երեսնոյ և Ռիւսոս վարժապետները:

Գերապատիւ Յակոբ Արքազան Եպիսկոպոսը Եդեսիա և Ռիւսոս գաղած ժամանակ, ինչպէս բոլոր պորտած տեղերը, նոյնպէս հոն ալ վար-

ժատունները այցելութեան երթալով, հետագայ համառօտ տեղեկութիւնը կը հաղորդէ մեզ: Յայտնի է թէ Եդեսիոյ մէջ Առսաւորչական և Ռուբինեան անուամբ ընկերութիւններ կան ժամանակէ ի վեր հաստատուած, որոց հսկողութեան տակ կը գտնուին դպրատունները. ահաւասիկ յիշեալ դպրատանց աշակերտաց թիւը եւ անոնց առած ուսմունքը, որ ոչ այնչափ գոհունակութեան եւ գովութեան՝ որչափ որ քաջալերութեան արժանի են:

Առսաւորչական ընկերութեան Ա. դպրատան ուսանողք.

Քերականութիւն սորվող . . .	22
Նոյն՝ գիշերային դասառութ . . .	11
Հասարակ ընթերցման պարապող . . .	9
Նոյն՝ գիշերային ուսանողք . . .	30
	72

Սոյն Ա. դպրատան աշակերտաց տնօրէն դասատու է Արեւեան տիրացու Յակոբ վարժապետն Ուրֆացի:

Բ. դպրատան աշակերտք նոյն ընկերութեան, որոյ դասատու է Քէօսեանց տիրացու Յակոբ Ուրֆացին:

Նարեկ, զէն հոգեւոր և գործոց ուսանողք	8
Սաղմոս կարգացողք	10
Հեգերէն	14
Քերական	17
	49

Ռուբինեան ընկերութեան Ա. դպրատան ուսանողք. որոց դասատու է տիրացու Գրիգոր Սիլակոտորեան:

Նարեկ, զէն հոգեւոր և գործոց ուսանողք	17
Սաղմոս և հեգերէն	39
Քերական	27
	83

Բ. դպրատան՝ Նարեկ, գործոց, ընթերցարան եւ այլն ուսանողաց թիւն